մամբ զարգարուի · իսկ բարի վարքը աւելորդ բան մըն է ։

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Սկզբունք երկրագործութեան ։

ԺԶ.

Ընդեղէններ մշակելու վրայ ։

Հ. Ամենէն շատ մշակուած ընդեղէնները որո՞նք են ·

Պ. Բակլայ, սիսեռ[1], լուբիա[2], ոսպ[3] ու ոլոռ[4] ։

Հ. Բակլային յարմար հողը ո՞րն է ·

Պ. Բակլան խոր՝ կաւոտ ու խոնաւ հողերուն մէջ շատ աղէկ առաջ կուգայ ։

Հ. Ի՞նչպէս կը մշակուի ·

Պ. Երկիրը կանուխկէկ հերկուած պիտի ըլլայ, որպէս զի օդէն ոյժ առնէ ։ Որովհետեւ խոնաւ հող շատ կը սիրէ, սփռելով ցանես նէ՝ խիստ կը բազմանայ, երկիրը բոլոր կը ծածկէ, բայց քիչ հունտ կուտայ · անոր համար կարգ կարգ ակօսներու մէջ տընկելը աւելի աղէկ է ։ Քանի որ աբօրով հողը կը պատռի, ցանողը անոր ետեւէն երթալով մէյմէկ ոտնաչափ հեռաւորութեամբ 4 կամ 5 հունտ կը ձգէ ։

Հ. Ե՞րբ կը ցանուի բակլան ·

Պ. Գարնան բակլան փետրուարի կամ մարտի սկիզբները կը ցանեն · իսկ ձմեռուանը սեպտեմբերին ։

Հ. Բակլայ մշակելը ի՞նչ օգուտ ունի ·

Պ. Մեծ օգտակարութիւնն աս է որ երկիրը դատարկ թողլու տարիդ ցանելով անոր ամենեւին վնաս մը չըներ, որովհետեւ իր մնունդը գետնէն չծծեր ։

1 Նօհուտ ։
2 Ֆասուլիա ։
3 Մերճիմէք ։
4 Պօրլուճ ·

Հ. Ի՞նչ հոգ ընելու է բակլային վրայ ·

Պ. Երբոր բակլաները կը ծլին՝ պէտք է զանոնք մէյմը տափանել · երբոր վեց բթաչափ կ'ըլլան՝ մէյմըն ալ տափանելու է՝ տաք ատեն մը ընտրելով · ետքը մանկեռով գէշ խոտերը խլելու է · երբոր պատիճը կը ձեւանայ, ցօղունին ծայրերը կտրտելու է ։

Հ. Բակլան ե՞րբ կը քաղեն ·

Պ. Երբոր պատիճները կը սկսին սեւնալ՝ օգոստոսի ու սեպտեմբերի մէջ · իսկ ձմեռուան բակլան յունիսի մէջ կը քաղուի ։

Հ. Մէկալ տեսակ ընդեղէնները մշակելուն կերպը բակլայինէն շատ տարբե՞ր է ·

Պ. Ոչ · ցանելուն ու մշակելուն կերպը նոյն է · միայն քանի մը տեսակները աւելի թեթեւ հողեր ու քիչ մը շատկեկ աղբ կ'ուզեն · ինչպէս են ուտելի սիսեռը, լուբիան ու ոսպը · ասոնց վրայ քիչ մը աւելի հոգ ընելու է՝ քան թէ խոտի տեղ անասնոց տալու համար տնկուածներուն, որոնց վրայ ետքը պիտի խօսինք ։

ԺԷ.

Գետնախնձոր մշակելու վրայ ։

Հ. Ի՞նչ է գետնախնձորը ·

Պ. Ամերիկայէն եկած բոյս մըն է, որ խոշոր և ալիւրոտ արմատ ունի ։

Հ. Ե՞րբ մտած է Եւրոպա ·

Պ. Կ'ըսեն թէ Ֆրանչիսկոս Տրաք անունով Ճանապարհորդը բերեր է ասիկայ Ամերիկայէն ԺԶ դարուն մէջ ։

Հ. Ո՞ր տեսակ հողը կը յարմարի գետնախնձորին ·

Պ. Գրեթէ ամէն տեսակ հողի մէջ առաջ կուգայ, բայց աւելի աղէկ է թեթեւ ու միջակ չորութիւն ունեցող հողը ։

Հ. Հողը ի՞նչպէս պատրաստելու է գետնախնձորի համար ·

Պ. Երկու իրեք անգամ խոր հերկելու է · երրորդ անգամ հերկելէն

առաջ՝ աղբով ծածկելու, ու. ետքը արօրով ան աղբը թաղելու է. աս վերջի գործողութիւնը մարտի մէջ կամ ապրիլի սկիզբները կ'ըլլայ :

Հ. Ետքը ի՞նչ ընելու է.

Պ. Տափանով հողուն երեսը շտկելէն ետև՝ իրեք իրեք ոտնաչափ հեռաւորութեամբ 8 մթաչափ խոր ծակեր բանալու, ու ան ծակերուն մէջ տնկելու է՝ ապրիլի սկիզբէն ինչուան մայիսի կէսը :

Հ. Ի՞նչպէս տնկելու է գետնախնձորը.

Պ. Մա՛նր գետնախնձորները մէյմէկ հատ ան ծակերուն մէջ կը թաղեն. իսկ որոնք որ մեծ են՝ կտոր կտոր կը կտրեն, անանկ որ ամէն մէկ կտորը մէյմէկ կամ երկերկու աչք ունենան: Երբեմն սորկած կճեպը կամ աչքը մինակ կը տնկեն. բայց աս կերպը ամէն անգամ առատ չպտղաբերեր : Երկրագործները կ'ըսեն թէ կտրելէն ետքը չցամած՝ զանոնք չորցընելը աղէկ է. ոմանք ալ աղի ջրի մէջ կը թրջեն :

Հ. Տնկելէն ետքը ի՞նչ հոգ ընելու է գետնախնձորին վրայ.

Պ. Ծլելէն ետև արտին վրայէն ատամնաւոր տափան մը անցընելու է որ գէշ խոտերը խլուին, և բունծերը փշրուին :

Հ. Երբոր քիչ մը բարձրանայ՝ ի՞նչ ընելու է.

Պ. Գէշ խոտերը խլելէն ետքը, որչափ որ ցօղունը բարձրանայ՝ անոր քովը հող դիզելու է. ուշ առաջ եկող տեսակներուն՝ գետնին մէջ թաղուած ցօղունն ալ արմատ կուտայ :

Հ. Գետնախնձորը քանի՞ տեսակ է.

Պ. Շատ տեսակ է գետնախնձորը, որ պզտի պարտէզներու մէջ կը մշակուի. իսկ արտի մէջ մշակուածներն են ճերմակն ու դեղինը :

Հ. Ա՛ղէկ տեսակ գետնախնձոր ունենալու համար ի՞նչ ընելու է.

Պ. Փորձով տեսնուած է, որ եթէ հասունցած հունտերը ժողվես և ինչուան գալ գարուն պահես, ու օդերը տաքնալուն պէս ցանես նէ, մանր գետնախնձորներ կուտան. ասոնք երկրորդ տարին նորէն որ տնկես, շատ աղէկ գետնախնձորներ կուտան, և կրնաս շատցընել. աս կերպով կ'աղէկնան անոնք՝ որ իրենց բնական յատկութիւնները կորսընցուցած են :

Հ. Գետնախնձորը ի՞նչպէս կը քաղեն.

Պ. Եղանով կամ հօսելիով կը հանեն գետնախնձորը. բայց աս բանիս համար կրնայ գործածուիլ նաև առանց կորեպեղի արօր մը :

Հ. Գետնախնձոր մշակելը ի՞նչ օգուտ ունի.

Պ. Ա՛ս բոյսը քիչ անգամ կը փճանայ, շատ բերք կը բերէ, ու աղէկ ալ կը ծախուի. օր օրուան վրայ գործածութիւնը կ'աւելնայ. ցորենի տեղ ալ կրնայ բռնել. երկու լիպրէ ցորենը կամ հացը որչափ որ սննդարար է՝ 7 լիպրէ գետնախնձորն ալ նոյնչափ է. և թէ որ տեղ մը առատ ցանուի աս բոյսը, ան տեղը սովի վախ չըլլար :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

Թէ մարդիկ ինչուան հիմա ինչ փորձեր ըրեր են Լողալու համար :

Հին ատենէն 'ի վեր մարդս տեսնելով թէ իրմէ շատ վար եղած արարածները այնպիսի կատարելութիւններ ունին՝ որ ինքը չունի, ուզեց կերպով մը ան կատարելութիւններն ալ ձեռք ձգել, և իր խելքովն ու հանճարովը շատ բանի մէջ ան չունեցած զգայարանքներուն պակասութիւնը լեցուց. ուստի վազուածքը սաստկացընելու համար ահագին կենդանիները սանձեց, ու ձիու՝ փղի և ջայլամի վրայ հեծնելով ճամբորդութիւններ ըրաւ. ջրի մէջ ոչ միայն նաւերով, այլ նաև ձուկի պէս լողալով սկսաւ քալել. օդու մէջ ալ օդապարիկ գունտերով